«Հայաստանի շախմատի ակադեմիա»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՐԵՎԱՆ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ **Ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում**

ԱՌԱՐԿԱ	**Շախմատ**
ՀԵՂԻՆԱԿ	**Լիլիթ Գևորգյան**
ՄԱՐԶ	**Երևան**
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	**Հ 186 հիմնական դպրոց**
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ	**Վահան Սարգսյան**

1 Հետազոտական աշխատանքի հիմնախնդրի հիմնավորում, արդիականություն /Գրականության վերլուծությամբ/

Կրթության ոլորտի բարեփոխումների իրականացման համատեքստում վերջին մի քանի տարիների ընթացքում ոլորտի հետազոտողների, փորձագետների ուսումնասիրությունների առանցքում է գտնվում նաև շախմատի ուսուցիչների մասնագիտական գործունեությանն առնչվող հիմնահարցերը: Հետազոտական աշխատանքի շրջանակում ուսումնասիրվել է թեմային առնչվող հայալեզու և օտարալեզու մասնագիտական արդի գրականություն, իրականացվել է ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի ուսումնասիրություն, ինչպես նաև կազմակերպվել է էմպիրիկ հետազոտություն՝ էլեկտրոնային հարցում՝ պարզելու շախմատի ուսուցիչների մասնագիտական և առարկայական զարգացման պատրաստակամությունն ու ընթացիկ խնդիրները: Վերլուծության են ենթարկվել շախմատի ուսուցիչների մասնագիտական զարգացման հիմնախնդիրները, և ներկայացվել են դրանց լուծման ուղիները: Սույն հետազոտական աշխատանքի շրջանակում իրականացված վերլուծության արդյունքները կարող են օգտագործվել կրթության ոլորտի բարեփոխումների, ոլորտային քաղաքականության ու ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներում՝ նպաստելով նրանց մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացմանն ու կրթության որակի բարելավմանը: Այս հետազոտական աշխատանքի, ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում մենք կպարզենք, թե կոնկրետ որ գործողությունների միջոցով կարելի է բարելավել շախմատի ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները: Այս աշխատանքը կօգնի ստեղծել հիմք՝ հետագա ավելի խորը ուսումնասիրությունների, ինչպես նաև հետազոտողների համար. կստեղծվի բազա ստեղծագործական մասնագիտական օրինակները կատարելագործելու կամ փոփոխելու համար: Պրակտիկ դաշտի մասնագետների համար այս աշխատանքը կծառայի որպես փորձի փոխանակման լավ օրինակ, քանզի աշխատանքում ներկայացված են լինելու ստեղծագործական և հետազոտական աշխատանքների օրինակներ, որոնք կարող են նպաստել ուսուցչի մասնագիտական աճին:

«Կրթության որակը չի կարող լինել ավելին, քան ուսուցիչների որակն է»[1]: Այս տեսության կողմնակիցները ներկայացնում և կարևորում են միջազգային փորձը, որը վկայում է այն մասին, որ մասնագիտական զարգացման ազդեցիկ միջոց է դպրոցի ներսում ուսուցիչների համագործակցությունը: «ՏՀՏ-ի կիրառությունը դասապրոցեսում», «Կրթական կայքեր և առցանց ուսումնական ռեսուրսներ» նյութերի շնորհիվ մենք կպարզենք, թե ինչպես կարող ենք օգտագործվել նորարարական տեխնոլոգիաները շախմատի ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործումն ապահովելու համար: «Ուսումնական հետաքրքրություններ» ուսումնաօժանդակ նյութի միջոցով մենք կբացահայտենք շախմատի ուսուցիչների մոտիվացիայի միջոցները, դրանց հասնելու տարբերակները: «Ուսուցչի հետազոտական գործունեությունը ժամանակակից դպրոցում» Տիտովա Ի Յու աշխատության

[1] «Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում Հանրակրթության բարեփոխումների համատեքստում» աշխատության գլուխ 2

միջոցով կպարզենք թե հետազոտական աշխատանքներ կատարելիս ինչ որակներ են զարգանում ուսուցչի մոտ, ինչպես նաև կտեսնենք, թե ինչպես դա կարող է օգնել շախմատի ուսուցչի գործունեության ընթացքում:

2 Հետազոտության նպատակ՝ Գտնել շախմատի ուսուցչի մասնագիտական և առարկայական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման արդյունավետ ճանապարհներ

3 Հետազոտության խնդիրներ կամ հարցեր /3 հստակ ձևակերպված հարց/-

√ *Ո՞րն է առարկայական և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը շախմատի ուսուցիչների համար*

√ *Ինչպե՞ս կարող է օգնել ՏՀՏ-ն և փորձի փոխանակումը շախմատի ուսուցչի մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործմանը, ստեղծագործական աշխատանքների կազմակերպմանը*

√ *Ի՞նչ հետազոտական աշխատանքներ է կատարում շախմատի ուսուցիչը՝ իր մասնագիտական զարգացումն ապահովելու համար*

4 Վարկածներ

Գոյություն ունի տեսակետ, որ շախմատի ուսուցիչները խուսափում են ստեղծագործական կամ հետազոտական աշխատանքներից, պատճառաբանելով, որ չկան օժանդակ նյութեր, որոնք կարելի է օգտագործել հետազոտության ընթացքում կամ ստեղծագործական աշխատանք կազմակերպելիս: Կա նաև կարծիք, որ շախմատը՝ լինելով խաղ, լրացուցիչ ստեղծագործական մոտեցման կարիք չունի, այսինքն՝ ստեղծագործական առումով բավական է խաղի գործնական հատվածը: Հաճախ է հնչում նաև այն դիրքորոշումը, որ ստեղծագործական աշխատանքները կատարվում են հանպատրաստից /իմպրովիզացիա/, պահի ազդեցության տակ: Այս և մնացած բոլոր մեզ հուզող հարցերի պատասխանները կպարզաբանվեն հետագա հուսումնասիրության արդյունքում:

5 Մեթոդաբանություն

Շախմատի ուսուցչի մասնագիտական կատարելագործմանը կարող են նպաստել հետազոտության կամ ստեղծագործական աշխատանքների համար ճիշտ մեթոդների ընտրությունը: Այս հետազոտական աշխատանքում մենք օգտագործելու ենք «խառը մեթոդների» տեսակը, ինչի արդյունքում համադրվելու են քանակական և որակական հետազոտության տեսակները: Օգտագործվելու է համատեղ քննարկման, վերլուծական աշխատանքների կատարման մեթոդները, ինչի արդյունքում կբացահայտվեն դասի ժամանակ ի հայտ եկող դժվարությունները:

6. Ընտրանք՝ մեթոդաբանություն, հաշվարկ, դեպքերի ընտրություն

Այս հետազոտական աշխատանքում օգտագործվել է հարմարության ընտրանքի մեթոդաբանությունը, ինչի արդյունքում կատարվել է հաշվարկ, տվյալների վերլուծություն և ներկայացում: Աշխատանքի ընթացքում, մասնավորապես՝ էմպիրիկ հետազոտության ընթացքում, օգտագործվել է նաև դատողական ընտրանքի տեսակը՝ կոնկրետ, բայց որոշակի սուբյեկտիվություն ունեցող արդյունքի արտահայտմամբ:

7 Գրականության վերլուծություն

Հաշվի առնելով Հանրակրթության մասին օրենքի «ուսուցիչը պարտավոր է հետևողականորեն կատարելագործել իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնել ստեղծագործական և

հետազոտական աշխատանքներ[2]» կետը հնարավորություն է տալիս տեսնելու, որ մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործումը, ինչպես նաև ստեղծագործական և հետազոտական աշխատանքների կատարումը մտնում է մանկավարժի պարտականությունների մեջ, հետևաբար ինչ-ինչ պատճառներով դրանից խուսափել, նշանակում է չկատարել բուն պարտականություններից մեկը: Այսինքն հետազոտական և ստեղծագործական աշխատանքների կատարումը ոչ թե ուսուցչի իրավունքն է, այլ՝ պարտականությունը: Հետևաբար՝ այդ աշխատանքներից այլևս խուսափել հնարավոր չէ, նամանավանդ ներկա ժամանակաշրջանում, երբ տեխնիկան, տեխնոլոգիաները, աշակերտների արժեքային համակարգն ու ցանկությունները մշտապես ենթարկվում են փոփոխման և զարգացման, շախմատի ուսուցիչն իր տեղում «կանգնած» չի կարող մնալ, իսկ ինչպես օրենքն է վկայում, նաև իրավունք էլ չունի: Ներկայումս, կապված ուսումնական ծրագրերի փոփոխման հետ՝ փոխվել են նաև շախմատի ուսուցչի անձին ներկայացվող պահանջները, և մեծ ուշադրություն է դարձվում ուսուցչի անձի հոգեբանական առանձնահատկություններին: Շախմատի ուսուցիչը շատ հաճախ իր վրա է վերցնում երեխայի ներաշխարհ թափանցելու, ճիշտ քայլերը գտնելու, ուղղորդելու, ինչպես նաև ժամանակակից կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցման պրոցեսը կազմակերպելու գործընթացը:

Ոչ պակաս կարևոր է դպրոցի ներսում ուսուցիչների համագործակցությունը: Այս մոտեցման դեպքում ստեղծվում են ուսուցչական խմբեր, որոնք համատեղ մշակում են դասի պլաններ, վարում և դիտարկում են դասեր, ապա կատարում դասերի վերլուծություններ: Նման դեպքերում ուսուցիչները առաջարկներ և դիտողություններ են ստանում իրենց գործընկերներից և հնարավորություն ունենում բարելավելու իրենց աշխատանքը: Այս առումով Հայաստանում ուսուցիչները շարունակում են մնալ որպես մեկուսացած աշխատողներ: Շախմատ առարկայի դասավանդման դեպքում սա ներկայացնում է որոշակի դժվարություն, քանի որ խմբերը հիմնականում ձևավորվում են միևնույն առարկայի դասավանդող մասնագետների համախմբմամբ, իսկ շախմատ առարկայի դասավանդող ուսուցիչները տվյալ դպրոցում հիմնականում մեկ, առավելագույն դեպքում երկուսն են: Սակայն այս դեպքում, համագործակցությունը կարող է, և շատ հաճախ լինում է մեթոդմիավորման ներսում, կամ, ավելի հաճախ, տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների հետ: Սա կարող է բերել դրական արդյունքի, քանի որ դասավանդում են նույն դասարաններում, իսկ դասվարների հետ շփումը կարող է մեթոդապես, ինչպես նաև ստեղծագործական առումով զարգացնել շախմատի ուսուցչի մանկավարժական կարողությունները, սակայն առարկայական գիտելիքների առումով, սա օգուտ բերել չի կարող: Եթե մի փոքր փորձել ընդլայնել շփման շրջանակը, և կապ ստեղծել զուգահեռ դպրոցների շախմատի ուսուցիչների հետ, ապա կարելի է հասնել նաև շախմատային գիտելիքների կատարելագործման որոշակի տոկոսի: Քանի որ շախմատի դասերի նպատակը նաև մարտավարական կարողությունների և հաշվարկման տեխնիկայի զարգացումն է, ապա տարբեր խաղային իրավիճակների և մարտավարական հնարների միջոցով հարկավոր է ապահովել այդ գիտելիքների յուրացումը աշակերտների կողմից: Դրա համար հենց

[2] Հանրակրթության մասին օրենքի գլուխ 5 Հոդված 27 Մանկավարժական աշխատողների իրավունքներն ու պարտականությունները՝ կետ 5)

առաջին հերթին շախմատի ուսուցիչը պետք է տիրապետի այդ գիտելիքներին, որպեսզի կարողանա հավուր պատշաճի մատուցել այդ գիտելիքները աշակերտներին: Շախմատ խաղն ուղղակիորեն կապված է կիբեռնետիկայի և կիրառական մաթեմատիկայի հետ, հետևաբար մեծ դեր գիտելիքների մշտական կատարելագործման գործում կարող է խաղալ նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ճիշտ կիրառությունը: Այն կարող է հետազոտական աշխատանքների կազմակերպման լավ գործիք հանդիսանալ, ինչպես նաև ստեղծել բազա ստեղծագործական յուրահատուկ և տարբերվող աշխատանքներ ստեղծելու համար: ՏՀՏ-ի միջոցով կարելի է ստեղծել ստեղծագործական հետաքրքիր աշխատանքներ crosswordlabs.com, learningapps.org կայքերի օգտագործման միջոցով[3], ինչպես նաև օգտագործելով googleforms հարթակով կարող ենք ստեղծել հետաքրքիր շախմատային թեստային աշխատանքներ, մցնելով հետաքրքրություն արդեն առօրեական դարձած շախմատի դասի մեջ: Իսկ գիտելիքների և մասնագիտական կարողությունների կատարելագործման համար կարող ենք հետազոտական աշխատանքներ կազմակերպել chesschool.am, armedu.am, e-school.am, escs.am կրթական կայքերի միջոցով: Տարբեր ստեղծագործական և հետազոտական աշխատանքների կատարման արդյունքում շախմատի ուսուցիչները ոգևորվում են, հասկանալով որ իրենց գիտելիքների բազան ընդլայնվել է, ինչի արդյունքում առաջանում է մոտիվացիա, որի գիտակցման դեպքում շեշտը դրվում է ոչ թե արտաքին պարգևների կամ խրախուսանքի վրա, այլ վեր է հանվում ներքին մոտիվացիան[4]՝ գիտակցումն այն բանի, որ այդ ամենը արվում է անձի զարգացման և կատարելագործման համար: Մոտիվացված աշխատանքի բուն նպատակն է մարդու գիտակցությանը հասցնել այն փաստը, որ իր կատարած աշխատանքի ավարտին, սպասվելիք արդյունքը կարող է կրկնապատկվել, սակայն քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ շախմատի ուսուցիչների մոտիվացիայի արտաքին գործոնները նույնպես զգալի նշանակություն ունեն: Այսպիսով՝ շախմատի ուսուցչի մոտիվացիոն ֆոնը կայուն չէ, իսկ ստեղծագործական աշխատանքներում դա հաճախ խոչընդոտներ կարող է առաջացնել: Այս պարագայում դրական ազդեցություն կարող է ունենալ շախմատի ուսուցչի՝ նորը սովորելու, ժամանակին համընթաց քայլելու ցանկությունն ու ձգտումը:

«Աշխարհագրական մեծ հայտնագործությունների ժամանակներն անցել են, բայց կյանքում միշտ տեղ կա նոր հետազոտությունների և մեծ բացահայտումների համար»:[5] Քանի որ շախմատ առարկան համեմատաբար նոր առարկա է կրթական համակարգում, իսկ ուսուցիչները, մեծ մասամբ, սկսնակ ուսուցիչներ են կամ մարզիչներ, նրանց համար շատ ավելի դժվար է հաղթահարել վախը և գտնել ստեղծագործական զարգացման նոր ճանապարհներ: Այս աշխատանքների կատարումը պետք է դարձնել հասանելի և պարզ շախմատի ուսուցչի համար, փոխել նրա պատկերացումները գիտական ուսումնասիրության դերի մասին: Նոր կրթական ծրագրերի համապատասխան արդեն տարրական դասարաններից սկսած կատարվելու են նախագծային աշխատանքներ: Այդօրինակ աշխատանքների կատարման ընթացքում աշակերտներին համապատասխան աջակցություն

[3] Տ Ենոքյան «Կրթական կայքեր և առցանց ուսումնական ռեսուրսներ»
[4] Վ Սարգսյան «Ուսումնական հետաքրքրություններ»
[5] Գարրի Կասպարով «Շախմատը որպես կյանքի մոդել» էջ 6

ցուցաբերելու և ուղղորդելու համար շախմատի ուսուցիչն ինքը պետք է պատկերացում ունենա հետազոտական գործունեության մասին: Ուսուցիչը կկարողանա նաև ավելի ռեալ գնահատականներ տալ կատարված աշխատանքներին:

Աղյուսակ 1



8 Փոքրիկ մեկնարկային էմպիրիկ հետազոտություն

Հետազոտության փորձարարական մասը կազմակերպվել է տարբեր դպրոցների շախմատի ուսուցիչների շրջանում:

Հետազոտման նպատակները՝ ուսումնասիրել շախմատի ուսուցիչների կողմից ստեղծագործական և հետազոտական աշխատանքների կատարման հաճախականությունը, ինչպես նաև արձանագրել թե ինչ տեսակ աշխատանքներ են նրանք նախընտրում

Հետազոտման խնդիրները.

Ճշտել շախմատի ուսուցչի ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու պատրաստակամությունը,

Տանել մի շարք ուսումնասիրություններ և անկետավորումներ շախմատի ուսուցիչների նկատմամբ,

Քննարկել ստացված էմպիրիկ տվյալները,

Անել ընդհանրացումներ և եզրակացություններ:

Հետազոտման մեթոդները: Լիարժեք և ճշգրիտ արդյունքների ստացման համար օգտագործվել են հետևյալ մեթոդները՝ դիտում, անկետավորում, զրույց, ստացված տվյալների քանակական և որակական վերլուծություն:

Հետազոտման փուլերը՝

1. Հետազոտման պլանավորում, անկետայի բովանդակության փնտրում, համախմբում և նախապատրաստում:
2. Շախմատի ուսուցիչների անկետավորման անցկացում:
3. Ստացված էմպիրիկ տվյալների մշակում և նախնական վերլուծություն:
4. Էմպիրիկ հետազոտման արդյունքների ձևակերպում:

Հետազոտման օբյեկտը՝ շախմատ առարկայի ուսուցչի մանկավարժական գործունեությունն է:

Հետազոտման առարկան՝ շախմատ առարկայի ուսուցչի կողմից ստեղծագործական և հետազոտական աշխատանքների իրականացում:

Հետազոտման ընթացքը՝

Իրական հետազոտությունն անց է կացվել տասը տարբեր շախմատի ուսուցիչների մոտ: Հետազոտման ընթացքում պարզվել է, օգտագործում են արդյոք շախմատի ուսուցիչները տարբեր ստեղծագործական միջոցներ իրենց դասերի ժամանակ, կատարում են արդյոք հետազոտական աշխատանքներ, ինչ կարգի աշխատանքներ են նախընտրում կատարել իրեց դասերի ժամանակ:

Ուսումնասիրման ընթացքում ստացված արդյունքները քննարկվել են նույն ուսուցիչների հետ դասերից հետո: Այնուհետև նրանց առաջարկվել է պատասխանել հարցաթերթիկի հարցերին:

Հարցաթերթիկի հղում

Զրույցի և անկետավորման նպատակն էր այն բանի պարզաբանումը, թե պլանավորվում է արդյոք շախմատի ուսուցչի կողմից այս կամ այն ստեղծագործական կամ հետազոտական աշխատանքը, գոհ է արդյոք ուսուցիչը իր ստեղծագործական մոտեցումից և ինչ կարգի ստեղծագործական խաղեր, վիկտորինաներ, խմբային կամ զույգերով աշխատանքներ է օգտագործում նա: Անկետավորման արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում և աղյուսակ 3-ում :

Աղյուսակ 2















Ստացված տվյալներն ամփոփելով կարող ենք ասել, որ հարցված շախմատի ուսուցիչների մեծ մասը նախապես պլանավորում է իր կատարելիք ստեղծագործական աշխատանքը, ուսուցիչների կարծիքով իրենց կատարած ստեղծագործական աշխատանքները արդյունավետ են, ուսուցիչները նաև արտահայտվեցին, որ կատարում են որոշակի հետազոտական աշխատանքներ, որոնք արդյունավետ են, օգնում են ուսուցչին կատարելագործել իրենց առարկայական գիտելիքները: Աղյուսակից երևում է, որ կա նաև շատ չնչին տոկոս բացասական արձագանքած ուսուցիչների: Ուրախացնում է այն փաստը, որ հարցմանը մասնակցած շախմատի ուսուցիչների 81,3% կիրառում է զույգերով աշխատանք, 68,8 % ՝ վիկտորինաներ, 62,5 % ՝խմբային աշխատանքներ, 50% ՝ ֆիզկուլտ-դադարներ, և, ամենաքիչ, 18,8% ՝ամփոփիչ խաղեր: Բոլոր ցուցանիշները բավականին լավն էին, սակայն իմ կարծիքով, սեփական փորձից, կարող եմ ասել որ թեմայի ամփոփման դասերին կամ օրվա դասի վերջում ամփոփիչ «like, dislike» խաղը տարրական դասարանների աշակերտները շատ սիրով են խաղում: Խաղի արդյունքում ամփոփվում է անցած գիտելիքները, ստուգվում է ուշադրությունը, հիշողությունը, արագ արձագանքելու կարողությունը:

Եզրակացություն

Նախ այս հետազոտական աշխատանքի արդյունքում մենք պարզեցինք, որ ցանկացած ուսուցչի պարտականությունների մեջ է մտնում կատարել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ: Այլ հարց է, թե ինչպես է դա օգնում կատարելագործել մասնագիտական և առարկայական կարողությունները: Շախմատ առարկան մեծ հաշվով իրենից ներկայացնում է խաղ, սակայն եթե այն երեխայի գիտակցության մեջ մնա որպես հասարակ խաղ, ապա տևական արդյունքի հասնել չի հաջողվի: Այդ գաղափարն ինքնըստինքյան կսկսի ձանձրացնել երեխային և կկորի հետաքրքրությունն առարկայի նկատմամբ: Այդ իսկ պատճառով շախմատի ուսուցիչը պարբերաբար թարմացնում է իր գիտելիքների պաշարը, ցուցաբերում ստեղծագործական մոտեցում, մշտապես կատարում հետազոտական աշխատանքներ՝ առարկան և, ընդհանրապես, ուսման գաղափարը երեխայի հետաքրքրությունների շրջանակներում պահելու համար: Այս նպատակով հաճախ կազմակերպվում են քննարկումներ առարկան դասավանդող մյուս

ուսուցիչների, ինչպես նաև դասվարների հետ: Կարևոր է նաև տիրապետել ՏՀՏ գործիքներին: Անհրաժեշտ է այս հարցում ունենալ մոտիվացված ուսուցիչներ, իսկ դրան հասնելու համար կարևոր է ցույց տալ շախմատի ուսուցչին, որ ստեղծագործական և հետազոտական աշխատանքներն առաջին հերթին հարկավոր են հենց իրեն, քանզի այդ հետազոտության արդյունքում նա կատարելագործվում է և՛ որպես մանկավարժ, և՛ որպես առարկայի դասավանդող ուսուցիչ: Նա նաև հնարավորություն է ստանում հետագայում՝ հիմնվելով իր օրինակի վրա, օգնել աշակերտներին իրենց նախագծային աշխատանքներում: Էմպիրիկ հետազոտության արդյունքները բավական լավն էին և ապացուցեցին, որ շախմատի ուսուցիչները հիմնականում պատրաստ են կատարելագործել իրենց մասնագիտական ունակությունները, ինչպես նաև առարկայական գիտելիքները:

Հետազոտության նախագծի հայտնի թերությունները: *Այս հետազոտական աշխատանքում, ցավոք, չխոսվեց ԿԱՊԿՈՒ երեխաների հետ կատարվող ստեղծագործական և հետազոտական աշխատանքների վրա ունեցած ազդեցության մասին: Կարելի էր նաև ստեղծագործական և հետազոտական աշխատանքների կազմակերպումը կապել աշակերտի արժեքային համակարգի ձևավորման ու զարգացման հետ, օգտագործել դա որպես շարժառիթ՝ ուսուցչի կողմից մշտապես նոր ճանապարհների որոնման համար:*

Օգտագործված գրականության ցանկ

1 Հանրակրթության մասին օրենքի գլուխ 5 Հոդված 27 Մանկավարժական աշխատողների իրավունքներն ու պարտականությունները
2 «Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում Հանրակրթության բարեփոխումների համատեքստում» Սերոբ Խաչատրյան, Սիլվա Պետրոսյան, Գայանե Թերզյան
3 «Կրթական կայքեր և առցանց ուսումնական ռեսուրսներ» Տաթևիկ Ենոքյան
4 «ՏՀՏ-ի կիրառությունը դասապրոցեսում» ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ, Ինտերակտիվ կրթության զարգացման
5 «Ուսումնական հետաքրքրություններ» Վահան Սարգսյան
6 «Ուսուցչի հետազոտական գործունեությունը ժամանակակից դպրոցում» Տիտովա Ի Յու
7 «Շախմատը որպես կյանքի մոդել» Գարրի Կասպարով